ԱՐՎԵՍՏԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

# «ԻՆՔՆԱՆԿԱՐ» ՖԻԼՄԻ ՊՐԵՄԻԵՐԱՅԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՀՅՈՒՐԸ ՌՈԲԻԿՈ ՍՏՈՒՐՈՒԱՆ ԷՐ


ՄԱՅԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

*Անցած շաբաթ Երեւանի «Մոսկվա» կինոթատրոնում էկրան բարձրացավ ռեժիսոր Ռուբեն Քոչարի (20-րդ դարի մոդեռն ոճի քանդակագործ Երվանդ Քոչարի (1899-1979) որդին) «Ինքնանկար» ֆիլմը: Նոր գեղարվեստական ֆիլմը Թբիլիսիում ծնված, նախկին թիվ 110 հայկական դպրոցի շրջանավարտ եւ 90-ականներից Երեւանում բնակություն հաստատած, հանրահռչակ գեղանկարիչ Մայիս Մխիթարյանի մասին է, ով կինոնկարում հանդես է գալիս իր իսկ դերում: 65 րոպե տեւողությամբ, բնույթով գեղարվեստա-վավերագրական կինոնկարը քրիստոնեության, հավատքի ազդեցության ու ապաշխարանքի մասին է, այն հոգեւոր արժեքների, որոնք Մայիս Մխիթարյան նկարչի կտավների խթանն են, խորհուրդը, հիմքն ու վրձնած արվեստի էությունը: Ռուբեն Քոչարի հիմնանպատակը հայ ժամանակակից կերպարվեստի երեւույթներից մայիսական հենց այդ ծանոթ ու անծանոթ աշխարհի բացահայտումն է, հանրության կողմից ժամանակակցի մեծության արժեւորումը, վայելումն ու առավել մեծ շրջանակներին մատուցումը:*



Լայն արձագանք ստացած «Ինքնանկարն» այժմ թարգմանվում է անգլերեն ու վրացերեն՝ մոտ ժամանակներում Վրաստանում եւս ցուցադրվելու նախատեսումով: Նախաձեռնողները Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռոբիկո Ստուրուան եւ Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանն են, ովքեր այդ օրը ոչ միայն հյուրի, այլեւ Մայիսի վաղեմի բարեկամի կարգավիճակով, Ռուսթավելու թատրոնի տնօրեն Գիորգի Թեւզաձեի հետ ներկա գտնվեցին ֆիլմի անդրանիկ ցուցադրմանը Երեւանում:

Ի դեպ, կինոնկարի դրվագներից մեկում հենց ինքը՝ Ռոբիկո Ստուրուան է ընդգրկված:

Մեզ հետ հեռախոսազրույցում Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան պետական ակադեմիական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռոբիկո Ստուրուան ասաց.

- *Ցնցված եւ հիացած եմ ու նաեւ համոզվեցի, որ իմ հին ու լավ բարեկամ Մայիս Մխիթարյանը ոչ թե հանճարեղ գեղանկարիչ է, այլ տաղանդավոր, ես կասեի տաղանդաշատ անձնավորություն՝ ժամանակակից արվեստի աշխարհում:*

Ռոբիկո Ստուրուայի դերը ֆիլմում իր խոսող պատմությունն ունի:

- *Կինոնկարի նկարահանման օրերին, մենք Ռոբիկոյի հետ հյուրընկալվեցինք Մայիսի մոտ,-* մեզ հետ զրույցում պատմեց Արմեն Բայանդուրյանը:- *Վարպետը՝ Վարպետին իր վրձնած պատկերներով թիկնոց կոլաժ նվիրեց, որն անմիջապես Ստուրուան հագավ: Այդ ջերմ պահը՝ որպես պատմություն, դրոշմեց նաեւ «Ինքնանկարում», իբրեւ երկու Մեծերի ընկերության առհավատչյա: Եվ Երեւան մեր ժամանումը այդ անխախտ բարեկամության հերթական ապացույցն էր: Եկել էինք Մայիսի հետ ուրախանալու եւ նրան կրկին անգամ մեծարելու: Ի դեպ, իմ լավ ընկերոջը՝ Մայիսին, առ այսօր ճանաչում էի՝ որպես հզոր նկարիչ, այդ օրը բացահայտեցի նրա դերասանական կարողությունները եւս: Հիանալի էր խաղում: Մայիսը միշտ մոտ է եղել թատրոնին, միշտ աջակցել իր գունառատ երեւակայությամբ: Իսկ հիմա առավել քան երջանիկ եմ, երբ արդեն հաստատ գիտեմ, որ հունվարից պաշտոնապես ստանձնելու է Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գլխավոր նկարչի պաշտոնը: Առաջին ներկայացումը, որ «կվրձնի» Մայիս Մխիթարյանը «Աշնանային հրիկնամուտն» է լինելու...*

Արմեն Բայանդուրյանը երախտագիտությամբ խոսեց եւ կինոնկարի գլխավոր պրոդյուսեր ու հովանավոր Գրիգոր Մովսիսյանի մասին, ում հովանավորությամբ լույս են տեսել նաեւ «Վահագնի ծնունդը կամ մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը», Գարեգին Ա երջանկահիշատակ կաթողիկոսի քարոզների երկհատորյակը, հոգեւոր այլ տպագրություններ:

- *Գրիգոր Մովսիսյանն այն եզակի մեկենասներից է, ովքեր իրենք են հետաքրքրված արվեստով եւ այն ապրեցնելու անհրաժեշտությամբ ու մղումով: Նա Ռուբեն Քոչարին անձամբ է խնդրել հովանավորել Երվանդ Քոչարին նվիրված որեւէ միջոցառում: Ի պատասխան, մաեստրոն նշել է, որ Երվանդ Քոչար անունն ինքնին հարթում է իր ճանապարհը եւ հնչեցրել մեկ այլ առաջարկ. ֆիլմ նկարահանել հայ ժողովրդի մեկ այլ զավակի՝ Մայիս Մխիթարյանի մասին: Սա իհարկե, խոսում է Ռուբեն Քոչարի մեծահոգության եւ արժեքները ճիշտ ժամանակին գնահատելու սկզբունքային մոտեցման մասին:*

Ինքը՝ Ռուբեն Քոչարը, մեզ հետ զրույցներից մեկում նշել է, որ, ֆիլմի հերոս ընտրելիս, առաջնորդվել է արվեստագետ հասկացողությամբ ընդհանրապես, իսկ Մայիս Մխիթարյանը, ըստ նրա, իր մեջ ներառում է այն ամենը, ինչ բնորոշ է արվեստին: Իսկ հարցին, թե ինչո՞ւ է կոչվում «Ինքնանկար», Ռուբեն Քոչարն ասաց.

- *Նա փորձում է նկարել ինքն իրեն, այստեղ է, որ սկսվում է ամբողջ կոնֆլիկտը, պատմությունը: Սա է դառնում հետաքրքիր, երբ տեսնում ենք, թե ինչպես է նկարիչը ստեղծում իր ինքնանկարը:*

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

*Նկարում.- Ռուբեն Քոչարը, Գրիգոր Մովսիսյանը, Ռոբերտ Ստուրուան եւ Մայիս Մխիթարյանը Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանում, աղուհացով հանդիպման պահին:*



ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԾԵՐԱՑՈՒՄԸ ԴԱՆԴԱՂԵՑՆՈՂ ՄԻՋՈ՞Ց...



*Համընդհանուր ընդունված ճշմարտություն է՝ ժամանակը ամենակարողն է, որ դրան ոչինչ հակադրել չի լինի: Իհարկե, դա այդպես է, թեպետ վերջերս տեղեկայա, որ հայտնաբերվել է երիտասարդության «էլիկսիրը»: Որքանո՞վ է դա համապատասխանում իրականությանը:*

*Բ. ՄՈՒՐԱԴՅԱՆ*

*Թբիլիսի*

Ցավոք, երիտասարդության «էլիկսիրի» մասին ոչինչ ասել չենք կարող, իսկ ինչ վերաբերում է ծերացման գործընթացին, ապա, որքան էլ տարօրինակ լինի, գիտնականները հայտնաբերել են դրա դանդաղեցման հնարավորությունը: Մասնավորապես, ԱՄՆ-ի Մինեսոտայի համալսարանի եւ Մայոյի կլինիկայի գիտնականները պարզել են, որ ֆիզեթին բնական նյութը, որը պարունակում են բանջարեղենի ու մրգերի շատ տեսակներ, դրական ազդեցություն է գործում մարդու առողջության եւ կյանքի տեւողության վրա:

Տարիքի հետ մարդու օրգանիզմում տեղի է ունենում բջջի ծերացման եւ այնտեղ վնասված բջիջների կուտակման գործընթաց, նշված է մամուլի տեղեկագրում: Իմունային համակարգը երիտասարդության տարիներին ունակ է օրգանիզմը հաջողությամբ մաքրել նման բջիջներից: Սակայն, տարիքի հետ մաքրման արդյունավետությունը նվազում է, ինչը հանգեցնում է օրգանիզմում վնասված բջիջների կուտակման եւ մարդու մարմնում հյուսվածքների վիճակի վատթարացման:

Հետազոտողները, ծերացող մկների վրա գիտափորձ կատարելով, հայտնաբերել են, որ ֆիզեթինն օրգանիզմում իջեցնում է վնասված բջիջների մակարդակը, ինչը, իր հերթին, բարելավում է փորձարկվողների առողջական վիճակն ու կյանքի տեւողությունը: Հետազոտության արդյունքները վկայում են, որ ֆիզեթինի միջոցով կարելի է երկարացնել կյանքի առողջ շրջանի տեւողությունը, երբ օրգանիզմը գտնվում է օպտիմալ վիճակում, նույնիսկ՝ կյանքի վերջին շրջանում, եզրակացրել են մասնագետները:

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԵՆ ԱՆԴՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ՈՒՂԵՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ



*Վերջերս շատ են գրում երեխաների համար համակարգչային խաղերի վտանգավորության մասին, թեպետ կոնկրետ չի նշվում, թե ինչով են դրանք վտանգավոր: Գուցե դո՞ւք պարզաբանեք:*

*Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

*Մառնեուլի*

Շատ ժամեր համակարգչի էկրանի առջեւ եւ համացանցում խաղերով զբաղվող երեխաների գլխուղեղը դանդաղում է իր զարգացման մեջ: Այս եզրակացությանն են հանգել ԱՄՆ-ի Առողջապահության ազգային ինստիտուտների (MIH) մասնագետները, որոնք ավարտել են բազմամյա հետազոտությունը:

Գիտնականների աշխատանքի առաջին արդյունքները, որոնք ուսումնասիրել են երեխաների գլխուղեղի գործառնական վիճակը մագնիսառեզոնանսային շերտագրության միջոցով, ցույց են տվել, որ այն սմարթֆոնների, մոնիտորների էկրանների, համակարգիչների առջեւ երկար ժամանակ անցկացնող երեխաների մոտ, որոնք թույլ են տալիս մասնակցել տեխնիկապես «ամենազարգացած» խաղերին, փոփոխություններ են նկատվում ուղեղի հյուսվածքների կառուցվածքում:

Ինչպես կարծում է ծրագրի ղեկավարներից մեկը՝ դոկտոր Գայա Դոուլինգը, հետազոտված երեխաների մագնիսառեզոնանսային շերտագրության տվյալները վկայում են գլխուղեղի կեղեւի՝ ամենազգայուն գոյացության խիստ բարակելու մասին, որն արձագանքում է դրսից ստացվող ազդանշաններին եւ պատասխանատու է մարդու ինտելեկտուալ զարգացման համար:

ԱՄԱՆՈՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

## ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ՆՎԵՐՆԵՐ ԵՎ ԻՆՉ ՆՎԻՐԵԼ ԱՄԱՆՈՐԻՆ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

### 1. Խնամքի պարագա

Սա նվերների այն կատեգորիան է, որի դեպքում սխալվելու հավանականությունը շատ քիչ է: Ո՞վ խնամքի միջոցների կարիք չունի՝ անկախ տարիքից, սեռից, կարգավիճակից ու նախասիրություններից: Իհարկե, այս պարագայում եւս փակ աչքերով գնումներ կատարել չի հաջողվի: Ուշադրություն դարձեք տարիքային սանդղակին՝ 20+, 30+, 50+..., որպեսզի սխալմամբ ձեր 49 տարեկան բարեկամուհուն չնվիրեք 50+ քսուկ: Քանի որ հստակ չեք իմանա տվյալ անձի մաշկի տեսակը, ընտրեք բոլոր տեսակի մաշկերի համար տարբերակը, բույրերից՝ չեզոքը: Որպեսզի չշտապեք խանութ ու տան բոլոր անդամների համար գնեք մեկական օճառ, շտապեմ զգուշացնել, որ նվերի համար նախատեսված խնամքի միջոցները պետք է տարբերվեն ձեր ամենօրյա խնամքի միջոցներից: Գնեք բնական հումքով, ձեռքով պատրաստված խնամքի միջոցներ կամ գործարանայիններից ընտրեք ամանորյա հավաքածուները, որոնք նրանք թողարկում են ամեն տարի: Դրանք ունեն տոնական փաթեթավորում, առանձնանում եմ ամանորյա շունչ հաղորդող դարչինի, մեխակի, ցիտրուսների բույրերով: Վստահ եղեք, որ այս նվերը կգնահատվի, եթե անգամ դուք միակը չլինեք, ով ընտրել է այս տարբերակը: Նվեր ստացողը մի քանի ամիս կարող է ազատվել այդ հոգսից:



### 2. Կոսմետիկ միջոց

Կոսմետիկ միջոցների ընտրությունն ավելի բարդ է: Այս պարագայում ձեզ չէր խանգարի տեսողական հիշողությունը, որպեսզի մտաբերերք, թե հիմնականում ինչպիսի դիմահարդարմամբ եք տեսնում ձեր ընկերուհուն կամ քույրիկին, որպեսզի գնեք նրա նախընտրած գույների ստվերաներկերն ու շրթներկերը: Կամ կարող եք գնալ լրիվ հակառակ ուղղությամբ ու նվիրեք նրան իր նախասիրություններին լիովին հակառակ գույներ՝ ակնարկելով, որ նոր տարին նորությունների, փորձարկումների ու փոփոխությունների շրջան է: Կոսմետիկայի բաժնից կարող եք հեռանալ նաեւ ոչ թե որեւէ կոսմետիկ միջոցով, այլ այդ ոլորտի գործիքներով ու պարագաներով: Ասել է թե՝ դիմահարդարման վրձիններ, սպունգներ կամ վրձինները լվացող նյութեր ու բարձիկներ:

### 3.Հագուստ

Քչերն են նվերի համար ուղեւորվում հագուստի բաժին՝ մտավախություն ունենալով, որ կսխալվեն գույնի, չափի ու ճաշակի հարցում: Դրա հավանականությունը, իհարկե կա, բայց եթե ընտրեք այժմ նորաձեւ համարվող «օվերսայզ» մոդել, սխալվելու հավանականությունը բավականին կքչանա: Բացի այդ, կարող եք դիմել աշխատակիցների օգնությանը, եւ մի քանի պարզ հուշումից հետո, նրանք կօգնեն ձեզ ընտրել ճիշտ չափը: Որպես վերջին տարբերակ՝ կարող եք աչքի տակով անցկացնել նվիրառուի հագուստի պիտակը: Ամենախոս s, m, xl տառերը կփրկեն իրավիճակն աչքաչափի բացակայության պարագայում: Ի դեպ, չմոռանաք, որ հագուստը միայն տաբատն ու բլուզը չեն: Կարող եք ընտրել որակյալ, հետաքրքիր գիշերազգեստ, թրենդային զուգագուլպա կամ նորաձեւ ժիլետ: Եվս մեկ կարեւոր հիշեցում. հագուստ նվիրելիս՝ կցեք դրան գնման կտրոնը, որպեսզի այն կարողանան հեշտությամբ փոխել կամ վերադարձնել:

### 4. Աքսեսուարներ

Եթե հագուստի խանութից պատրաստվում եք դատարկաձեռն հեռանալ, մի պահ կանգ առեք ու ուղղեք ձեր քայլերն աքսեսուարների բաժին: Այստեղ հաստատ կգտնեք ունիվերսալ մի շարֆ՝ սեւ, սպիտակ, բեժ կամ մոխրագույն, որը կսազի ցանկացած վերնահագուստի հետ եւ, ցուրտ ձմռանը տաքացնելիս, կհիշեցնի ձեր մասին: Լավագույն նվերների շարքում են նաեւ ժամացույցները, անձրեւանոցները, պայուսակները, ձեռնոցները, գոտիները: Իսկ գլխարկները տեսնելիս՝ ես ձեր փոխարեն չէի ոգեւորվի: Մարդկանց մեծամասնությունը կարծում է, որ իրենց ոչ մի գլխարկ չի սազում, ուրիշի գնածը՝ առավել եւս:

### 5. Գրքեր եւ գրենական պիտույքներ

Գրքեր սիրում ու կարդում են բոլորը, համենայնդեպս, ոչ ոք հակառակը չի խոստովանում: Այնպես որ, դասական ստեղծագործությունները կամ նոր լույս տեսած, աղմուկ հանած վեպերը սիրով կընդունվի բոլորի կողմից: Բայց եթե ինքներդ չեք կարդում ու չգիտեք՝ ինչ ասել է դասական ստեղծագործություն, ապա ընտրեք գրենական պարագաներ: Օրինակ՝ գեղեցիկ շապիկով օրատետրը, նոթատետրն ու օրագիրը պատկանում են հաճելի եւ օգտակար նվերների ցանկին միաժամանակ:

### 6. Տան պարագաներ

Ինչպես արդեն նշեցինք վերեւում, տան պարագաները միանշանակ չեն ընդունվում բոլորի կողմից: Կան կանայք, որոնց համար այդ նվերը խոհանոցից դուրս չգալու ակնարկ է պարունակում, բայց եթե դուք նվեր եք ընտրում այնպիսի կնոջ համար, ով հպարտանում է իր գաղտնի բաղադրատոմսերով ու սիրում է ընկերական փոքրիկ հավաքույթների սեղանը զարդարել համեղ ու գեղեցիկ աղանդերներով, ապա գեղեցիկ տորթի մատուցարանը, խմորեղենների ամանորյա ֆորմաները, կոնյակի բաժակների հավաքածուն կամ աղցանի մկրատը կդառնա նրա ստացած ամենալավ նվերը այս ամանորին:

### 7. Էլեկտրոնային սարքավորումներ

Իհարկե, խոսքը սմարթ հեռուստացույցի մասին չէ (թեեւ, դա էլ վատ տարբերակ չէ): Մեր էլեկտրոնիկայի դարում այդ շարքից նվերներ ընտրելը իսկական խաղուպար է: Ականջակալներ, սմարթ ժամացույց, սմարթ ակնոց, պրոյեկտոր, անլար բարձրախոս, սելֆիի ձող, դրոն... Այս շարքն անվերջ կարելի է շարունակել: Պարզապես ընտրեք ձեր գրպանին ամենահարմարը եւ ուրախացրեք ընկերներին ու հարազատներին նորարար մոտեցմամբ:

### 8. Սննդային նվերներ

Այո', մարդիկ սիրում են ուտել, հատկապես՝ համեղ բաներ, հատկապես՝ ամանորին: Այնպես որ, սիրուն տուփի մեջ դրված ամանորյա թեմատիկայով թխվածքաբլիթները կարող են հաջող կերպով փոխարինել ավանդական շոկոլադե տուփերին: Կամ կարող եք ընտրել նաեւ շոկոլադե տուփեր, բայց որոնց մեջ իսկապես շոկոլադ է, որոնք ունեն գեղեցիկ փաթեթավորում, պատրաստված են բնական հումքից, ունեն յուրահատուկ միջուկ... Յուրահատուկ, հիշվող ու հաճելի նվեր կլինեն նաեւ համեղ թեյը, նրանց սիրելի սուրճը, թանկարժեք ու քիչ տարածված համեմունքները, ձնեմարդու տեսքով տորթն ու ձեր պատրաստած գաղտնի բաղադրատոմսով աղցանը:

(Շարունակելի)

## Ա Ն Ե Կ Դ Ո Տ Ն Ե Ր

*☺ Ընկերուհիները հանդիպում են փողոցում: Նրանցից մեկը հարցնում է.*

*- Ո՞ւր ես գնում:*

*- Ամուսնալուծվելու:*

*- Կատակո՞ւմ ես...*

*- Ծուռ ամուսինս տոլմա էր եփել. անչափ աղի էր ու յուղոտ: Աղից աղի կուտակում եմ ստացել, յուղից՝ խոլեստերինս է շատացել:*

*Ընկերուհին պոռթկում է.*

*- Ա՜յ շաշ, բա էդ տեսակ գանձ է ձեռքդ ընկել, ուզում ես մարդաթող ըլնե՞ս...*

*☺ Գիշերը վաղուց կիսվել էր, բայց հինգամյա Թորոսիկը կարծես բոլորովին միտք չուներ քնելու: Համառորեն կպել էր մորը.*

*- Մի հեքիաթ էլ պատմիր, կքնեմ, բայց նորը, որ դեռ չեմ լսել...*

*Հայկուշը հերթական անգամ աչքը գցում է ժամացույցին ու վերջնականապես նյարդայնացած պոռթկում.*

*- Ա՜յ լակոտ, դե քնի, հերիք եղավ: Կամ էլ համբերիր, ուրոլէ հերդ կբարեհաճի ժամանել ու երկուսիս թազա հեքիաթներ կպատմի...*

*☺ Կինն ամուսնուն.*

*- Իմ տոնի առթիվ ինձ ի՞նչ ես նվիրելու:*

*Գինովցած ամուսինը զարմացած նայում է տիկնոջն ու բազմանշանակ ասում.*

*- Էս հալիս որ հազիվ հասել եմ տուն, բա նվեր չի՞ քեզ համար...*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. ՀԱՊԿ-Ի ԱՆԴԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԻ ՁԳՏՈՒՄ ԴԵՊԻ ՆԱՏՕ»



*Դեկտեմբերի 10-ին Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը, անցկացված խորհրդարանական ընտրությունների և դրանցում իր գլխավորած «Իմ քայլը» դաշինքի հաղթանակի կապակցությամբ, հանդիպում ունեցավ օտարերկրյա լրագրողների հետ եւ պատասխանեց նրանց հետաքրքրող հարցերին:*

Ինչպես նշեց վարչապետի պաշտոնակատարը, Հայաստանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ է, եւ չի ձգտում դեպի ՆԱՏՕ, բայց շարունակելու է պահպանել հարաբերությունները դաշինքի հետ:

- Մենք հարաբերություններ ունենք ՆԱՏՕ-ի հետ, դրանք կապված են խաղաղապահ առաքելությունների հետ, այդ թվում՝ Կոսովոյում, Աֆղանստանում, եւ մենք շարունակելու ենք այդ համագործակցությունը: Բայց մենք չենք ձգտում դեպի ՆԱՏՕ, մենք ՀԱՊԿ-ի անդամ ենք,- նշեց Նիկոլ Փաշինյանը եւ հավելեց, որ Հայաստանը պահպանում է գործընկերային հարաբերությունները ե'ւ Ռուսաստանի, ե'ւ ԵՄ-ի հետ, բայց չի լինելու որեւէ մեկի ազդեցության տակ:

Վարչապետի պաշտոնակատարը անդրադարձավ նաեւ Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու հարցին: Նրա խոսքով, Հայաստանը հայտնում է առանց նախապայմանների Թուրքիայի հետ ուղիղ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու պատրաստակամության մասին:

- Հուսով ենք, որ Թուրքիան նույնպես այդպիսի կեցվածք կընդունի,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

Ընդ որում, անընդունելի նախապայմանների թվում Փաշինյանը նշեց Լեռնային Ղարաբաղի հարցը:

- Բայց Թուրքիայի հետ հարաբերությունները կապված են Լեռնային Ղարաբաղի հարցի հետ, երրորդ երկրի հետ: Ես նկատի ունեմ Ադրբեջանը,- նկատեց նա:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ

*2018թ. դեկտեմբերի 9-ին Հայաստանում տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ, հայ ժողովրդին եւ Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանին շնորհավորական ուղերձներ են հղել եւ շարունակում են հղել օտարերկրյա պետությունների մի շարք պաշտոնյաներ, գերատեսչությունների ներկայացուցիչներ, ովքեր ողջունել են Հայաստանում ժողովրդավարական ընտրությունների անցկացման փաստը: Ստորեւ կանդրադառնանք մինչ այս եղած հայտարարություններին ու կարեւոր շեշտադրումներին:*

Կարեւոր է առանձնացնել ԱՄՆ պետդեպարտամենտի տարածած հայտարարությունը՝ ուղղված Հայաստանի ժողովրդին: ԱՄՆ-ը, համաձայնելով ԵԱՀԿ-ի նախնական եզրակացության հետ, կոչ է արել իշխանություններին ապագա ընտրություններում հետեւել ԵԱՀԿ-ի եւ Վենետիկի հանձնաժողովի առաջարկություններին: Պետդեպարտամենտի շնորհավորական ուղերձում հատկանշական է այն շեշտադրումը, որ անկախացումից ի վեր՝ 27 տարիների ընթացքում, ԱՄՆ-ը մշտապես իր աջակցությունն է ցույց տվել Հայաստանին ժողովրդավարական գործընթացների ու ինստիտուտների զարգացման գործում, եւ այժմ էլ պատրաստ է շարունակել իր աջակցությունը: Ավելին՝ ԱՄՆ պետդեպարտամենտն ընդգծել է Հայաստանի նոր խորհրդարանի եւ կառավարության հետ աշխատելու իր պատրաստակամությունը՝ խորացնելու երկկողմ գործընկերությունն ու համագործակցությունը՝ հանուն օրենքի գերակայության եւ ժողովրդավարական ինստիտուտների ուժեղացման, կոռուպցիայի դեմ պայքարի, առեւտրի ու ներդրումների առաջխաղացման եւ տարածաշրջանային ու համաշխարհային անվտանգության:

## 26 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

*Հայաստանի եւ Եվրոպական Միության միջեւ նախատեսվում է ստորագրել «Հայաստանում «ԵՄ-ն նորարարության համար» նախաձեռնություն. կրթության բարելավում՝ հատկապես գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության եւ մաթեմատիկայի ոլորտներում» ֆինանսավորման համաձայնագիրը:*



Ըստ երկրի կառավարության հիմնավորման, համաձայնագրի նպատակն է վերացնել աշխատաշուկայի կարիքների եւ երկրի կրթական համակարգի արդյունքների միջեւ անջրպետը, կրթական համակարգում ներդնել կրթական տեխնոլոգիաների առկայություն ու դասավանդման ժամանակակից մոտեցումներ եւ շարունակել զարգացնել մարդկային կապիտալը:

Համաձայնագրով նախատեսված է ԹՈՒՄՈ-ի հետ համագործակցությամբ տրամադրել աջակցություն «ԵՄ-ն նորարարության համար. ԹՈՒՄՈ կենտրոն»-ի ստեղծմանը, որը ԳՏՃՄ (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա) ոլորտի ուսանողներին իրենց մասնագիտական ոլորտի վերաբերյալ գործնական փորձառություն ձեռք բերելու համար հարթակ կտրամադրի: Ծրագիրը կաջակցի նաեւ մարզերում ԳՏՃՄ առարկաների դասավանդմանն ու ուսուցման գործընթացների ամրապնդմանը:

Համաձայնագրով նախատեսվող ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ բյուջեից՝ Եվրոպական հարեւանության գործիքի շրջանակներում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 26,125 մլն եվրո:

Ակնկալվում է, որ համաձայնագրի իրականացումը կնպաստի Հայաստանի զարգացմանը՝ կրթական համակարգի տարբեր մակարդակներում հատուկ ուշադրություն դարձնելով ԳՏՃՄ կրթության որակին:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԱԲԱՐ ԱՃՈՒՄ Է



*Հայաստանում տնտեսական ակտիվության ցուցանիշը առաջին տասը ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ, աճել է 6 տոկոսով:*

Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտեի տվյալներով, տնտեսական ակտիվության ցուցանիշը այս տարվա հունվարին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, աճել է 11,6 տոկոսով: Փետրվար ամսին, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, ցուցանիշն աճել է 8,8 տոկոսով, մարտին աճը կազմել է 10,9 տոկոս, ապրիլին՝ 7,1 տոկոս: 2018-ի մայիսին տնտեսական ակտիվության ցուցանիշը բարձրացել է՝ նախորդ տարվա մայիսի համեմատ ավելանալով 5.5 տոկոսով: Այս տարվա հունիսին ակտիվության ցուցանիշը, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, աճել է 9,8 տոկոսով, իսկ հուլիսին աճի տեմպը ավելացել է՝ կազմելով 11,1 տոկոսով, իսկ նույն տարվա հունիսի համեմատ՝ 7,8 տոկոսով:

Այս տարվա օգոստոսին, նախորդ օգոստոսի համեմատ, աճը կազմել է 5 տոկոս: Սեպտեմբերին միայն ցուցանիշը, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, նվազել է 0,2 տոկոսով, սակայն այն, այս տարվա օգոստոսի համեմատ, 8 տոկոսով ավելի էր:

Այս տարվա հոկտեմբեր ամսին տնտեսական ակտիվության ցուցանիշը, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, աճել է 3 տոկոսով: Ընդհանուր՝ նախորդ տարվա 10 ամիսների համեմատ, ակտիվության ցուցանիշը աճել է 6 տոկոսով:

Հայաստանը 2018 թվականին աննախադեպ առաջընթաց է գրանցել նաեւ տնտեսական մրցակցության ոլորտում:

Մասնավորապես, այս տարվա գնահատականներով Հայաստանը 2018 թվականին տնտեսական մրցակցության ոլորտում իր դիրքերը բարելավել է 9 կետով եւ ներկայումս աշխարհի 140 երկրի շարքում զբաղեցնում է 19-րդ հորիզոնականը, նախորդ տարվա 28-ի փոխարեն:

Հայաստանը այս առումով առաջ է գտնվում նաեւ ԵԱՏՄ անդամ երկրների շարքում՝ Ռուսաստանը զբաղեցնում է 63-րդ, Ղազախստանը՝ 84-րդ, Ղրղզստանը՝ 102-րդ տեղը: Հայաստանը գերազանցում է նաեւ տարածաշրջանի, ԱՊՀ անդամ եւ Արեւելյան Եվրոպայի մի շարք երկրներին: Վրաստանը գտնվում է 80-րդ, Լիտվան՝ 87-րդ, Լատվիան՝ 58-րդ, Սլովակիան 82-րդ, Հունգարիան՝ 99-րդ, Մոլդովան՝ 119-րդ, Թուրքիան՝ 86-րդ հորիզոնականում:

## ԿԱՅԱՑԱՎ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ-ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



*Դեկտեմբերի 13-ին Երեւանում կայացավ Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հետ:*

*Հանդիպմանը քննարկվել են հայկական երկու Հանրապետությունների ներքին եւ արտաքին քաղաքականությանը, անվտանգությանը, Արցախի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության՝ 2019 թվականի պետական բյուջեների ձեւավորմանը վերաբերող մի շարք հարցեր:*

## ԵՐԵՎԱՆԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՓԱԿՈՒՂԻՆ ԿՈՉՎԵՑ ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ԱՆՈՒՆՈՎ



*Երեւանի Մարշալ Բաղրամյան պողոտայի 1-ին փակուղին անվանակոչվեց իրավագետ, «ցեղասպանություն» եզրույթի հեղինակ Ռաֆայել Լեմկինի անվամբ:*

*Փողոցի անվանակոչման հանդիսավոր արարողությանը, Երեւանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը նշեց, որ Ռաֆայել Լեմկինի անվան փողոց ունենալու մասին որոշումը կայացվել է ավագանու նիստի ժամանակ:*

*Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Շոմբի Շարփն իր ելույթում ընդգծեց, որ 70 տարի առաջ այս օրերին միջազգային հանրությունը համախմբվեց՝ ընդունելու մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, եւ այդ իրադարձությունից մեկ օր առաջ էլ ընդունվեց Ցեղասպանության կանխարգելման եւ պատժի միջազգային կոնվենցիան:*

*- Այսօր մենք մեր հարգանքի տուրքն ենք մատուցում մի մարդու, ով մեծ ծառայություններ է ունեցել այս ոլորտում, եւ հարգում ենք նրա թողած ժառանգությունը: Որպես Լեհաստանում մեծացած, հրեական համայնքի ներկայացուցիչ՝ նա դարձավ նացիզմի դեմ պայքարի կարեւորագույն ներկայացուցիչներից մեկը:*

## ԿՐԿԻՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

*Դեկտեմբերի 7-ին, Հայաստանի վճռաբեկ դատարանի որոշմամբ, ձերբակալված է երկրի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:*

*Հայաստանի վճռաբեկ դատարանը ուժի մեջ է թողել առաջին ատյանի դատարանի որոշումը: Քոչարյանին ձերբակալել էին ընթացիկ տարվա հուլիսին, սակայն, օգոստոսին վճռաբեկ դատարանը կայացրել էր նրան ազատ արձակելու որոշում: Քիչ անց, Հայաստանի գլխավոր դատախազությունը որոշումը բողոքարկել էր վերաքննիչ դատարանում: Դրանից հետո, գործը վերադարձվել է վճռաբեկ դատարան:*

*Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին դատախազությունը մեղադրանք է ներկայացնում 2008 թվականի մարտին սահմանադրական կարգը տապալելու գործով:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ԴԵԿՏԵՄԲԵՐ



*17.12.2018. Սուրբ Հայրապետներ Իգնատիոսի, Ադդեի եւ Մարութա եպիսկոպոսի հիշատակության օր*

ՏՐԱՆՍՊՈՐՏ

## ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ

Վրաստանի ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային դեպարտամենտի տեղեկատվությամբ, Ստեփանծմինդա - Լարս ավտոճանապարհը փակ է տրանսպորտային բոլոր միջոցների համար:

Ինչ վերաբերում է Նինոծմինդա-Հայաստան սահման ավտոճանապարհին, ապա մաքրման աշխատանքների շնորհիվ վերականգնվել է բեռնատարների երթեւեկությունը: Դեպարտամենտի տեղեկատվությամբ, բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների երթեւեկությունը նշված ճանապարհահատվածում թույլատրելի է:

Մաքրման աշխատանքների շնորհիվ երթեւեկությունը վերականգնվել է նաեւ Ախալքալաքի-Կարծախ (Թուրքիայի սահման) ավտոճանապարհի 1-36 կմ հատվածում:

ՀՈԲԵԼՅԱՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ

## ԿԱՅԱՑԱՎ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՎ ԿՈՄԻՏԱՍԻ 150-ԱՄՅԱԿՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՎԻՐԱՀԱՅՈՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ



Դեկտեմբերի 14-ին Թբիլիսիում կայացավ Հովհ. Թումանյանի եւ Կոմիտաս Վարդապետի 150-ամյակների առնչությամբ վիրահայ համայնքային հոբելյանական հանձնաժողովի հերթական նիստը:

Նիստում քննարկվեցին հոբելյանական միջոցառումների կազմակերպման եւ անցկացման հետ առնչվող հարցեր, հստակեցվեց դրանց իրականացման ժամանակացույցը:

ՆՈՐՈՒՅԹ

## ԻՐԱԿԱՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՀԵՏԱՁԳՎՈՒՄ Է

*Իրական երթեւեկության պայմաններում վարորդական վկայականի ստացման համար գործնական քննության հանձնումը, որը ներդրվելու էր 2019 թվականի հունվարից, հետաձգվում է մի քանի ամսով:*



Ինչպես հայտարարել են Վրաստանի ՆԳ նախարարության սպասարկման գործակալությունից, քննական առանձին մի քանի երթուղիների շուրջ աշխատանքն արդեն ավարտվել է: Ներկայումս աշխատանքներ են տարվում ենթակառույցների ուղղությամբ:

Նշենք, որ վարորդական վկայականի ստացման համար մեքենայի վարման գործնական քննությունը Թբիլիսիից բացի, հնարավոր է հանձնել երկրի եւս տաս քաղաքներում՝ Ռուսթավիում, Թելավիում, Ախալցիխեում, Քութայիսիում, Սաչխերեում, Օզուրգեթիում, Բաթումիում, Զուգդիդիում եւ Փոթիում:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

## ԿԱՐԳԱԽՈՍԸ. «ԹԲԻԼԻՍԻՆ՝ ՍԻՐՈՎ ԼԻ ՔԱՂԱՔ»

*Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի այս տարվա ամանորյա կարգախոսն է՝ «Սիրով լի քաղաք»: Այս մասին քաղաքապետարանի նիստում հայտարարեց քաղաքապետ Կախա Կալաձեն:*



Նրա խոսքով, ամենաշատը, ինչն անհրաժեշտ է երկրին եւ քաղաքին, փոխադարձ հարգանքն է, միմյանց նկատմամբ սերը, քանի որ հանրությունը հոգնել է այսքան ատելությունից, զայրույթից եւ միմյանց վիրավորելուց:

- Մեր քաղաքին այսօր ամենաշատն անհրաժեշտ է փոխադարձ հարգանք ու սեր, քանի որ հանրությունը հոգնել է ատելությունից եւ վիրավորանքներից: Մենք հնարավոր է ունենք տարբեր քաղաքական հայացքներ ու կարծիքներ, սակայն դրանք պետք է արտահայտվեն քաղաքակիրթ ձեւով, պետք է լինեն բանավեճեր, ոչ այնպես, ինչպես տեղի է ունենում այսօր,- հայտարարել է Կախա Կալաձեն:

Հիշեցնենք, որ նախորդ տարի Թբիլիսիի կարգախոսը «Կյանքով լի քաղաքն» էր, որը նաեւ Կալաձեի նախընտրական կարգախոսն էր:

ՍՊՈՐՏ

### ՖՈՒՏԲՈԼ. ՎԱՐԿԱՆԻՇԸ՝ ՑՈՒՑԱԴՐԱԾ ԽԱՂԻ ՈՐԱԿԻ ՀԱՅԵԼԻ




Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակել է ազգային հավաքականների հերթական վարկանիշային աղյուսակը:

Վրաստանի հավաքականը, Ազգերի լիգայի մրցաշարի հաջող ելույթների արդյունքում, առաջադիմել է երեք հորիզոնականով եւ ներկայիս աղյուսակում հանգրվանել 89-րդ հորիզոնականում:

Ինչ վերաբերում է Հայաստանի հավաքականին, ապա այն պահպանեց իր դիրքերը եւ, ինչպես նախորդ աղյուսակում, հիմա էլ զբաղեցրեց 101-րդ տեղը:

Վարկանիշային նոր աղյուսակում, նախորդի նման առաջատարը մնացել է անփոփոխ: Աղյուսակը շարունակում է գլխավորել Բելգիայի ազգային ընտրանին: Առաջատարների եռյակում են նաեւ Ֆրանսիայի ու Բրազիլիայի հավաքականները: Իսկ լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել Խորվաթիայի, Անգլիայի, Պորտուգալիայի, Ուրուգվայի, Շվեյցարիայի, Իսպանիայի եւ Դանիայի հավաքականները:

### ՎՈԼԵՅԲՈԼ. ԵՎՐՈՊԱՅԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՄԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Երեկ՝ դեկտեմբերի 14-ին, Երեւանում մեկնարկեց արեւելաեվրոպական երկրների վոլեյբոլի Մ15 տարեկան տղաների առաջնությունը, որին մասնակցում են Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի եւ Լեհաստանի հավաքականները:

Առաջին ենթախմբի առաջին տուրում Հայաստանի հավաքականն ուժերը չափել է Լատվիայի ընտրանու հետ եւ զիջել 0:3 հաշվով: Բելառուսները՝ 3:0 հաշվով հաղթել են Լիտվայի թիմին:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Հայ անվանի որմնանկարիչ: 4.Քաղաք Հայաստանում, որը հայտնի է նաեւ «Հայկական Կարթագեն» անունով: 8.Սահմանամերձ հայաբնակ գյուղ Վրաստանում: 11.Մարզկենտրոն Հայաստանում: 14.Պատ, պարսպապատ: 15.Խարդախ, խաբեբա, չարանենգ: 16.Ֆրանսիացի հանրահայտ գրող: 17.Փաթաթվող բույս: 18.Ժամանակավոր կացարան արշավորդի համար: 19.Հայաստանի մայրաքաղաքներից: 21.Մտերմիկ խոսակցություն: 22.Ցուցական դերանուն: 25.Վանք Արցախում: 26.Հին թագավորություն Վրաստանում: 28.Չպղծված, չեղծված, անարատ: 31.Աստվածաշնչյան կերպար, Նոյի որդիներից: 33.Հացաբույսի տեսակ: 36.Ետադաս կապ: 38.Հին թաղամաս Երեւանում: 39.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 40.Հայ հայտնի դերասանուհի ... Թուխմանյան: 41.Մասիսի փոքր եղբայրը: 43.Ամսանուն հայոց հին օրացույցում: 44.Ոչ հեռու, մերձ: 45.Կրկեսային մրցասպարեզ: 48.Մանրացնող սարք: 49.Շատ փափուկ ու թմբլիկ: 51.Երգահան ... Եկմալյան: 52.Սիբիրյան գետ: 54.Թութակի տեսակ: 56.Չափ ու քանակի մակբայ: 57.Դեմք չունեցող:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Գյուղ Ախալքալաքի մունիցիպալիտետում: 2.Վրաց հայտնի գրող ... Բարաթաշվիլի: 3.Դաշնակ Դրոյի գավառը կամ Սուրբ Մարիի աղավաղված ձեւը: 4.Ռուս մեծ գրող Ա.Պուշկինի սիրելի դայակը: 5.Գետ Վրաստանում: 6.Մամիկոնյանների գավառը: 7.Խաչատուր Աբովյանի ծննդավայրը: 9.Քաջ, կտրիճ, անվախ: 10.Մաշտոցյան այբուբենի վերջին տառերից: 12.Մարմնամարզիկ, Օլիմպիական խաղերի չեմպիոն Ալբերտ ...: 13.Վառ, պայծառ: 20.Ալ. Շիրվանզադեի երկերից: 22.Ուրարտուի թագավորության արքա: 23.Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհ.Թումանյանի ծննդավայր գյուղը: 24.Աշուղ Ջիվանու ուսուցիչը: 27.Շան կամ գայլի ձագը: 29.«Երկինք Թ դարու» վեպի հեղինակը: 30.Լեռներ Հարավային Ամերիկայում: 32.Դրախտային կամ ... այգի: 34.Արի, մոտեցիր: 35.Թիակի ոսկորը: 37.Զգոն, սթափ: 41.Լեռ Արեւմտյան Հայաստանում: 42.Վրաց անվանի դերասանուհի ... Ճիաուրելի: 46.Ասիական պետություն: 47.Դաղձ, անանուխ: 50.Բաղդադ մայրաքաղաքով պետությունը: 53.Համադասական շաղկապ: 55.Ցուցական դերանուն:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Անլեգալ: 9.Ժյուրի: 10.Վաչե: 11.Լիբերեց: 13.Ղալիմ: 16.Թուզ: 17.Տող: 19.Լուսան: 22.Սեդան: 24.Բիրեմա: 25.Շելֆ: 27.Անտոնս: 29.Լուսակա: 32.Եռամարտ: 33.Դանիել: 35.Սարք: 37.Ղեկ: 39.Ստնտու: 40.Աթոս: 43.Գեն: 44.Ռիսկ: 47.Ավե: 49.Մոթել: 50.Տեղը: 53.Սինի: 54.Իպր: 55.Իսկի: 57.Չեշ: 58.Ագատիչ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Կնճիթ: 2.Թերեզ: 3.Հավետ: 4.Ուժեղ: 5.Ռուալ: 6.Ֆիլմ: 8.Լացող: 12.Բուրդ: 14.Ամուր: 15.Իմամ: 18.Անեմ: 19.Լիբում: 20.Սեմարանգ: 21.Նանա: 23.Աշտիկ: 26.Լսել: 28.Նվաղ: 29.Լառ: 30.Սաստ: 31.Կտրտել: 34.Նելսոն: 36.Քուն: 38.Կով: 41.Թալիշ: 42.Սետրա: 45.Իմիջ: 46.Կթիչ: 48.Եղիա: 51.Ըստ: 52.Ճիչ: 56.Կի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445